ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«21» մարտի 2023 թվականի N 700- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի N 2715-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներով, հիմք ընդունելով Գյումրի համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Քնարիկ Հարությունյանի (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի մարտի 16-ին N 4522 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2021 թվականի նոյեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու մշտական գործող թվով չորս հանձնաժողովների կազմերը հաստատելու մասին» N 2715-Ա որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 4-րդ կետի 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.
«5) Ստեփանյան Հասմիկ Ստեփանի,»:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գյումրի համայնքի ավագանու անդամ Հասմիկ Ստեփանի Ստեփանյանին, իրավական հարցերի մշտական գործող հանձնաժողովի նախագահ Մխիթար Գուրգենի Սահակյանին և «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Քնարիկ Հարությունյանին պատշաճ իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

21.03.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» մարտի 2023 **թվականի** N 699-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՈՒ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՃՈՒՐԴ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 5-րդ և 8-րդ հոդվածների, Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-դ կետի, հիմք ընդունելով Գյումրի համայնքի ավագանու 18.04.2014թ. N 60-Ն, 14.09.2021թ. N 213-Ա, 14.02. 2023 թվականի փետրվարի 14-ի N 28-Ա ,N 29-Ա և N 30-Ա որոշումները՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն ու անշարժ գույքը աճուրդով օտարելու համար 2023 թվականի ապրիլի 19-ին կազմակերպել աճուրդ: Աճուրդի մասին իրազեկել հանրությանը՝ օրենքով սահմանված կարգով:
2. Հաստատել աճուրդի հայտարարությունը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ղեկավարի
2023 թվականի
N 699-Լ որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գյումրու համայնքապետարանի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկությունների (աճուրդների) կազմակերպման և անցկացման համար Գյումրու համայնքապետարանը հայտարարում է համայնքային սեփականություն համարվող ներքոհիշյալ հողամասերի դասական աճուրդ

Լոտ	Հողամասի հասցեն /գտնվելու Վայրը /տարածագնահատման գոտին	Ծածկագիր Մակերեսը՝ քառ.մ.	Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը	Հողամասի օգտագործման նպատակը	Հողամասի նկատմամբ սահմանափակումների /ներառյալ սերվիտուտների/ առկայությունը	Ճանապարհների, ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալներ	Շրջակա միջավայրի և պատմամշակութային հուշարձանների պահպանության, բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումներ	Մեկնարկային գինը /ՀՀ դրամ/	Նախավճարը ՀՀ դրամ
1.	Մուշ-2 թաղամաս N 29/9 11-րդ գոտի	08-001-0128-0013 32.64	Բնակավայրերի բնակելի կառուցապատում	Ավտոտնակի կառուցում	չկա	չկա	Չի պահանջվում	153 408 (մեկ հարյուր հիսուներեք հազար չորս հարյուր ութ)	76 704 (յոթանասունվեց հազար յոթ հարյուր չորս)
2.	Մուշ-2 թաղամաս N 29/10 11-րդ գոտի	08-001-0128-0013 32.64	Բնակավայրերի բնակելի կառուցապատում	Ավտոտնակի կառուցում	չկա	չկա	Չի պահանջվում	153 408 (մեկ հարյուր հիսուներեք հազար չորս հարյուր ութ)	76 704 (յոթանասունվեց հազար յոթ հարյուր չորս)
3.	Խ.Կոշտոյան փողոց N 18/14 10-րդ գոտի	08-001-0441-0035 216.03	Բնակավայրերի բնակելի կառուցապատում	Բնակելի տան կառուցում	չկա	չկա	Չի պահանջվում	2 215 000 (երկու միլիոն երկու հարյուր տասնհինգ հազար)	1 107 500 (մեկ միլիոն հարյուր յոթ հազար հինգ հարյուր)
4.	Վիեննայի փողոց N 33/3 10-րդ գոտի	08-001-0086-0041 348.26	Բնակավայրերի բնակելի կառուցապատում	Բնակելի տան կառուցում	չկա	չկա	Չի պահանջվում	2 510 000 (երկու միլիոն հինգ հարյուր տասը հազար)	1 255 000 (մեկ միլիոն երկու հարյուր հիսունհինգ հազար)

Աճուրդի հաղթողները պետք է համամասնորեն մասնակցեն թաղամասի ճանապարհների և ընդհանուր ինժեներական կոմունիկացիոն ցանցերի նախագծման և կառուցման աշխատանքներին:
Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգի, հողամասերի վերաբերյալ գրաֆիկական նյութերին կարող են ծանոթանալ Գյումրու համայնքապետարանում /Վարդանանցիր. 1/, ինչպես նաև Գյումրու համայնքապետարանի ինտերնետային կայքում՝ www.gyumricity.am:
Աճուրդին մասնակցելու իրավունք ունեն՝ ՀՀ քաղաքացիներն ու իրավաբանական անձիք և ՀՀ օրենսդրությամբ սահմանված հողի սեփականության իրավունքի այլ սուբյեկտներ և հողօգտագործողներ:
Աճուրդի պայմանների մանրամասներին՝ հողամասի ելակետային տվյալներին, ճարտարապետահատակագծային առաջադրանքի պահանջներին և պայմաններին, հողամասի հատակագծին ,պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Գյումրու համայնքապետարան /Վարդանանց հր. 1 2.22.28/:
Աճուրդը կայանալու է 2023թ. ապրիլի 19-ին ժ.16⁰⁰-ին,Վարդանանց հր.1, 2-րդ հարկ: Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2023թ. ապրիլի 13-ը ներառյալ ժ.16⁰⁰:

ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գյումրու համայնքապետարանը հայտարարում է համայնքային սեփականություն հանդիսացող շինությունների (իրենց զբաղեցրած հողամասերով) դասական աճուրդ

№	Շինության հասցեն (գտնվելու վայրը)	Շինության մակերեսը (քառ.մ.)	Հողամասի մակերեսը (քառ.մ.)	Աճուրդի Մասնակցության վճարը (դրամ)	Նախավճարի չափը (մեկնարկային գնի 5 %-ը) (դրամ)	Աճուրդի մեկնարկային գինը (դրամ)
1.	Ա.Շիրակացու փողոց N 13/63	318.96	374.67	30 000 (երեսուն հազար)	1 100 000 (մեկ միլիոն հարյուր հազար)	22 000 000 (քսաներկու միլիոն)
2.	Գ.Նժդեհի փողոց N 20/15	26.43	36.96	30 000 (երեսուն հազար)	120 000 (մեկ հարյուր քսան հազար)	2 400 000 (երկու միլիոն չորս հարյուր հազար)

Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ ներկայացնելով անձնագիրը, մասնակցության վճարի և նախավճարի կտրոնները:

Հայտերն ընդունվում են մինչև 2023 թ. ապրիլի 13-ը ներառյալ:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Գյումրու համայնքապետարանի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնում (2-րդ հարկ), ինչպես նաև Գյումրու համայնքապետարանի ինտերնետային կայքում՝ www.gyumricity.am:

Աճուրդը կայանալու է 2023 թ. ապրիլի 19–ին ժամը 16^{00} -ին:

Հասցեն՝ Վարդանանց հրապ., 1, հեռ. 2.22.29:

ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» մարտի 2023 **թվականի** N 698-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԲՈՒԼՎԱՐԱՅԻՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ 15864.96 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 2402.02 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԻՄՔԵՐԸ, 13.5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՊԱՐԻՍՊԸ, 11.83 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇՎԱՔԱՐԱՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Բուլվարային փողոցի հարևանությամբ 15864.96 (տասնհինգ հազար ութ հարյուր վաթսունչորս ամբողջ իննսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցվել է 2402.02 (երկու հազար չորս հարյուր երկու ամբողջ երկու հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով հիմքերը, 13.5 (տասներեք ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով պարիսպը, 11.83 (տասնմեկ ամբողջ հինգ ութսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով շվաքարան:

Նկատի ունենալով, որ շինությունների պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չեն գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Բուլվարային փողոցի հարևանությամբ 15864.96 (տասնհինգ հազար ութ հարյուր վաթսունչորս ամբողջ իննսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 2402.02 (երկու հազար չորս հարյուր երկու ամբողջ երկու հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով հիմքերը, 13.5 (տասներեք ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով պարիսպը, 11.83 (տասնմեկ ամբողջ հինգ ութսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով շվաքարանը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

20.03.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» Մարտի 2023 թվականի N 697-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<գ>> պարբերությամբ, 8-րդ կետի 3-րդ ենթակետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Սուբվենցիոն ծրագրի շրջանակում գնանշման հարցման ընթացակարգի միջոցով որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերման նպատակով կազմավորել հայտերը գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

1) Մենուա Մկրտչյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ,

Հանձնաժողովի անդամներ՝

2) Նարեկ Բեգզադյան - համայնքի ղեկավարի առաջին տեղակալի օգնական,
3) Շուռիկ Հակոբյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի պետ
4) Օլգա Գևորգյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջին կարգի մասնագետ
5) Լևոն Բարսեղյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գործակալ

Հանձնաժողովի քարտուղար՝

6) Արմինե Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2023թ. ք. Գյումրի

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» Մարտի 2023 թվականի N 696-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԱՀԻՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 4/12 ՀԱՍՑԵԻ 23.4 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇՎԱՔԱՐԱՆԸ, 23.4 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՍՊԱՐՏԱԿ ՆԻԿՈԼԱՅԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Շահինյան փողոցի N 4/12 հասցեի 23.4 (քսաներեք ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով շվաքարանը հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 31082022-08-0025 վկայական):

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի և հիմք ընդունելով Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի N 26-Ա որոշումը և քաղաքացի Սպարտակ Նիկոլայի Գասպարյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականի մայիսի 17-ին N 8629 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Շահինյան փողոցի N 4/12 հասցեի 23.4 (քսաներեք ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերեսով 127530 (մեկ հարյուր քսանյոթ հազար հինգ հարյուր երեսուն) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով շվաքարանն ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Սպարտակ Նիկոլայի Գասպարյանին:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շահինյան փողոցի N 4/12 հասցեի 23.4 (քսաներեք ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 246028 (երկու հարյուր քառասունվեց հազար քսանութ) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Սպարտակ Նիկոլայի Գասպարյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո քաղաքացի Սպարտակ Նիկոլայի Գասպարյանը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումներ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Սպարտակ Նիկոլայի Գասպարյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
5. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Սպարտակ Նիկոլայի Գասպարյանի միջոցների հաշվին:

20.03.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» մարտի 2023 թվականի N 695-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՆԻ ԹԱՂԱՄԱՍԻ 7-ՐԴ ՓՈՂՈՑԻ N 23/3 ՀԱՍՑԵԻ 49.03 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Անի թաղամասի 7-րդ փողոցի N 23/3 հասցեի 49.03 (քառասունինն ամբողջ երեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Անի թաղամասի 7-րդ փողոցի N 23/3 հասցեի 49.03 (քառասունինն ամբողջ երեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակությունից փոփոխել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

20.03.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» մարտի 2023 թվականի N 696-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐՄԵՆՈՒՀԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ՍՈՒՐՃԻ ԲԱՑՕԹՅԱ ԱՌԵՎՏՈՒՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու «09» դեկտեմբերի 2022 թվականի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Արմենուհի Եղիազարյանի (ՀՎՀՀ՝ 57311905, գրանցման ամսաթիվը՝ 04.02.2016 թ.) 2023 թվականի մարտի 13-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի մարտի 13-ին 4143 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Արմենուհի Եղիազարյանին Գյումրի քաղաքի Պարույր Սևակ փողոցի հարևանությամբ իրականացնել սուրճի բացօթյա առևտուր:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի ապրիլի 4-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Արմենուհի Եղիազարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

20.03.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» Մարտի 2023 **թվականի** N 693 Ա

«Լ.Ա.Ռ. ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ ԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՒՇ-2 ԹԱՂԱՄԱՍԻ 7-ՐԴ ՓՈՂՈՑԻ ՇԵՆՔ 4/2 ՀԱՍՑԵՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու «09» դեկտեմբերի 2022 թվականի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «Լ.Ա.Ռ. ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն Աննա Սարգսյանի ՀՎՀՀ՝ 05541002, գրանցման ամսաթիվը՝ 10.01.2014 թ.) 2023 թվականի մարտի 9-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի մարտի 9-ին 3814 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել «Լ.Ա.Ռ. ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն Աննա Սարգսյանին Գյումրի քաղաքի Մուշ-2 թղմ. 7-րդ փ. շ. 4/2 հասցեում իրականացնել ոգելից խմիչքների վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի մարտի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Լ.Ա.Ռ. ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն Աննա Սարգսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

20.03.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» մարտի 2023 **թվականի** N 692-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐԱՄ ՉԱԽՈՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ 137/6 ՀԱՍՑԵՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու «09» դեկտեմբերի 2022 թվականի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Արամ Չախոյանի (ՀՎՀՀ՝ 57349844, գրանցման ամսաթիվը՝ 10.10.2019 թ.)2023 թվականի մարտի 13-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի մարտի 13-ին 34190 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Արամ Չախոյանին Գյումրի քաղաքի Շահումյան 137/6 հասցեում իրականացնել թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առք ու վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Արամ Չախոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

20.03.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» մարտի 2023 **թվականի** N 691-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Սուբվենցիոն ծրագրի շրջանակում գնանշման հարցման ընթացակարգի միջոցով որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերման նպատակով սահմանել՝

1) պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝
ա. պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Սուրեն Ջանոյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետ
բ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Աշոտ Գալստյան – «Գյումրու քաղաքային ճանապարհներ» և Գյումրի համայնքի մասնակցությամբ իրականացվող սուբվենցիոն ծրագրերի փորձագետ

2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արմինե Սարգսյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2023թ. ք. Գյումրի

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» մարտի 2023 թվականի N 690-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՎՈՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 668.29 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ, ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 109.65 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (103.96 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Սավոյան փողոցի հարևանությամբ, 668.29 (վեց հարյուր վաթսունութ ամբողջ քսանինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 109.65 (հարյուր ինը ամբողջ վաթսունիինգ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (103.96 (հարյուրերեք ամբողջ իննսունվեց հարյուրեր որդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինություն, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Շահեն Խաչատրյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Սավոյան փողոցի հարևանությամբ, 668.29 (վեց հարյուր վաթսունութ ամբողջ քսանինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 109.65 (հարյուր ինը ամբողջ վաթսունիինգ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (103.96 (հարյուրերեք ամբողջ իննսունվեց հարյուրեր որդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունy և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Շահեն Խաչատրյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

20.03.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» մարտի 2023 թվականի N 689-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՆՐԲԱՆՑՔ N65/13 ՀԱՍՑԵԻ 25.56 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻ (11.88 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 8.52 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Գործարանային նրբանցք N65/13 հասցեի 30.75 (երեսուն ամբողջ յոթանասունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի շինությունը հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N05122022-08-0027 վկայական):

Նկատի ունենալով, որ նշված շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի, հիմք ընդունելով Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի N26-Ա որոշումը և քաղաքացի Հայկ Սարգսյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականին N22946 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Գործարանային նրբանցք N65/13 հասցեի, օրինականացված 25.56 (քսանհինգ ամբողջ հիսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (11.88(տասնմեկ ամբողջ ութսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունը՝ 245836 (երկու հարյուր քառասունհինգ հազար ութ հարյուր երեսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Հայկ Սարգսյանին:
2. Գյումրի քաղաքի Գործարանային նրբանցք N65/13 հասցեի 8.52 (ութ ամբողջ հիսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը օտարման պահին կազմում է 16177 (տասվեց հազար հարյուր յոթանասունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 137828 (հարյուր երեսունյոթ հազար ութ հարյուր քսանութ) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Հայկ Սարգսյանին:
4.Գույքի օտարման վերաբերյալ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացի Հայկ Սարգսյանը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումները:
5.Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Հայկ Սարգսյանի միջոցների հաշվին:

20.03.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» մարտի 2023 թվականի N 688-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՋՈՒԼԻԵՏԱ ՎԱԶԳԵՆԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Լ. ՄԱԴՈՅԱՆ ՓՈՂՈՑ N334 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 87.32 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Ջուլիետա Վազգենի Թումանյանին պատկանող Գյումրի քաղաքի Լ.Մադոյան փողոց N334 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 87.32(ութսունյոթ ամբողջ երեսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս, որի վրա առկա է 75.13(յոթանասունհինգ ամբողջ տասներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի շինություն :

Քաղաքացի Ջուլիետա Վազգենի Թումանյանի լիազորված անձ Սվետլանա Սիմոնյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին, նշված հողամասի և շինության նկատմամբ սեփականության իրավունք ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում գործող քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, հիմք ընդունելով քաղաքացի Ջուլիետա Վազգենի Թումանյանի լիազորված անձ Սվետլանա Սիմոնյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականին N18137 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ճանաչել քաղաքացի Ջուլիետա Վազգենի Թումանյանի (ծնված 1945 թվականի դեկտեմբերի 10-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Լ.Մադոյան փողոց N334 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից ավել օգտագործվող, 87.32(ութսունյոթ ամբողջ երեսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և դրա վրա առկա 75.13(յոթանասունհինգ ամբողջ տասներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի շինության նկատմամբ:
2. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ջուլիետա Վազգենի Թումանյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

20.03.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» մարտի 2023 թվականի N 687-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ 16 ՇԵՆՔ N1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԳՏՆՎՈՂ 135.1 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ, ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 88.6ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (80.28 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ 1.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՊԱՐԻՍՊԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Մովսես Խորենացու փողոց 16 շենք N1 հասցեի բնակարանին կից, 135.1(հարյուր երեսունհինգ ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 88.6(ութսունութ ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր արտաքին (80.28 (ութսուն ամբողջ քսանութ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակ և 1.0 (մեկ) քառակուսի մետր մակերեսով պարիսպ, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Աշոտ Ասատրյանը:

Նկատի ունենալով, որ շինությունների պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Մովսես Խորենացու փողոց 16 շենք N1 հասցեի բնակարանին կից, 135.1(հարյուր երեսունհինգ ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 88.6(ութսունութ ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր արտաքին (80.28 (ութսուն ամբողջ քսանութ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակը և 1.0 (մեկ) քառակուսի մետր մակերեսով պարիսպը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Աշոտ Ասատրյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

20.03.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» մարտի 2023 թվականի N 686-Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԿԱՌԼԵՆ ՄԱՄԻԿՈՆԻ ԵՎ ԻՐԻՆԱ ԱԼԲԵՐՏԻ ՍԻՄՈՆՅԱՆՆԵՐԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԿՈՒ ՓՈՂՈՑ N56 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 192.86 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (160.84 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԸ, 87.68 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (80.64 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ 6 (ՎԵՑ) ԲԱՑՎԱԾՔՆԵՐԸ ԵՎ 5 (ՀԻՆԳ) ԴՌՆԵՐԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ՓԱԿՎԱԾ 4 (ՉՈՐՍ) ՊԱՏՈՒՀԱՆԸ ԵՎ 1 (ՄԵԿ) ԴՈՒՌԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացիներ Կառլեն Մամիկոնի և Իրինա Ալբերտի Սիմոնյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Գորկու փողոց N56 հասցեի հողամասում ինքնակամ կառուցվել է 192.86(հարյուր իննսուներկու ամբողջ ութսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (160.84(հարյուր վաթսուն ամբողջ ութսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով առեվտրի և սպասարկման օբյեկտ, 87.68(ութսունյոթ ամբողջ վաթսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (80.64(ութսուն ամբողջ վաթսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տուն, ինքնակամ բացված է 6 (վեց) բացվածքներ և 5 (հինգ) դռներ, ինքնակամ փակված է 4 (չորս) պատուհան և 1 (մեկ) դուռ :

Քաղաքացի Կառլեն Մամիկոնի Սիմոնյանը դիմել է նշված շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման >> կարգի 2-րդ բաժնի, հաշվի առնելով որ կառույցի պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով քաղաքացի Կառլեն Մամիկոնի Սիմոնյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականին N1446 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացիներ Կառլեն Մամիկոնի և Իրինա Ալբերտի Սիմոնյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Գորկու փողոց N56 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 192.86(հարյուր իննսուներկու ամբողջ ութսունվեց հարյուրերորդական) արտաքին (160.84(հարյուր վաթսուն ամբողջ ութսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով առեվտրի և սպասարկման օբյեկտը, 87.68(ութսունյոթ ամբողջ վաթսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (80.64(ութսուն ամբողջ վաթսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը, ինքնակամ բացված 6 (վեց) բացվածքները և 5 (հինգ) դռները, ինքնակամ փակված 4 (չորս) պատուհանը և 1 (մեկ) դուռը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 1845527 (մեկ միլիոն ութ հարյուր քառասունհինգ հազար հինգ հարյուր քսանյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Օրինականացման վերաբերյալ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների 60 օրյա ժամկետում չվճարման դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենքով սահմանված կարգով:

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 – – Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» Մարտի 2023 թվականի N 685-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԲՈՒԼՎԱՐԱՅԻՆ ՓՈՂՈՑ N206/010 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 61.71 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ, ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 61.71 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (53.3 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Բուլվարային փողոց N206/010 հասցեում, 61.71(վաթսունմեկ ամբողջ յոթանասունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 61.71(վաթսունմեկ ամբողջ յոթանասունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (53.3 (հիսուներեք ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինություն, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Նելլի Պետրոսյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Բուլվարային փողոց N206/010 հասցեում, 61.71(վաթսունմեկ ամբողջ յոթանասունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 61.71(վաթսունմեկ ամբողջ յոթանասունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (53.3 (հիսուներեք ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Նելլի Պետրոսյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

20.03.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» մարտի 2023 թվականի N 68-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՄԱՐԳԱՐԻՏ ԵԳՈՐԻ ԶԱՔԵՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑ N50 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 68.12 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 2.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Մարգարիտ եգորի Զաքեյանին պատկանող Գյումրի քաղաքի Սունդուկյան փողոց N50 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված է 68.12(վաթսունութ ամբողջ տասներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով շինություններ և օրինական շինության տակ գտնվող, օրինական հողամասին կից, ավել օգտագործվում է 2.0(երկու) քառակուսի մետր մակերեսով հողամաս:

Քաղաքացի Մարգարիտ եգորի Զաքեյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին, նշված հողամասի և շինությունների նկատմամբ սեփականության իրավունք ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում գործող քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանին Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի 22.1 կետի և հիմք ընդունելով քաղաքացի Մարգարիտ եգորի Զաքեյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականին N1487 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ճանաչել քաղաքացի Մարգարիտ եգորի Զաքեյանի (ծնված 1922 թվականի ապրիլի 12-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Սունդուկյան փողոց N50 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից, օրինական շինության տակ գտնվող, ավել օգտագործվող 2.0(երկու) քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ:
2. Գյումրի քաղաքի Սունդուկյան փողոց N50 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված 68.12(վաթսունութ ամբողջ տասներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով շինությունները ճանաչել օրինական:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Մարգարիտ եգորի Զաքեյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

20.03.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» մարտի 2023 թվականի N 683-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԵՆՈՒՀԻ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍՊԱՐՏԱԿԻ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ N7 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 39.9 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ՓԱԿՎԱԾ 1 (ՄԵԿ) ՊԱՏՈՒՀԱՆԸ, 1 (ՄԵԿ) ԴՈՒՌԸ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ 1 (ՄԵԿ) ԴՈՒՌՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Արմենուհի Վոլոդյայի Չիլինգարյանին պատկանող Գյումրի քաղաքի Սպարտակի փողոց 2-րդ նրբանցք N7 հասցեի տան հողամասում, մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցվել են 39.9 (երեսունինը ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի շինություններ, ինքնակամ փակված է 1 (մեկ) պատուհան, 1 (մեկ) դուռ եվ ինքնակամ բացված է 1 (մեկ) դուռ:

Քաղաքացի Արմենուհի Վոլոդյայի Չիլինգարյանի լիազորված անձ Իրինա Եղիազարյանը դիմել է նշված շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հաշվի առնելով որ կառույցի պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով քաղաքացի Արմենուհի Վոլոդյայի Չիլինգարյանի լիազորված անձ Իրինա Եղիազարյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023թվականին N93 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Արմենուհի Վոլոդյայի Չիլինգարյանին պատկանող Գյումրի քաղաքի Սպարտակի փողոց 2-րդ նրբանցք N7 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 39.9 (երեսունինը ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի շինություններն, ինքնակամ փակված 1 (մեկ) պատուհանը, 1 (մեկ) դուռը եվ ինքնակամ բացված 1 (մեկ) դուռը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 8175 (ութ հազար հարյուր յոթանասունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արմենուհի Վոլոդյայի Չիլինգարյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

20.03.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» մարտի 2023 **թվականի** N 682-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱԽՄԱՏԻ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԿԻՍԱԵԶՐԱՓԱԿԻՉ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության շախմատի պատանիների կիսաեզրափակիչ մրցումները 6 տարիքային խմբերով 2023 թվականի մարտի 23–ից ապրիլի 2-ը Երևան քաղաքում կայանալիք առաջնությանը Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով շախմատի ֆեդերացիայի 2023 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1–ին կետի 1–ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2023 թվականի մարտի 20-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության շախմատի պատանիների առաջնության կիսաեզրափակիչ մրցումները 6 տարիքային խմբերով մասնակցելու համար 2023 թվականի մարտի 23–ից ապրիլի 2-ը քաղաք Երևան գործուղել թվով 14 (տասնչորս) անձանց:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2023 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» մարտի 2023 թվականի N 681-Ա

